Երկիր Ծիրանի


Վանաձորի քաղաքապետ

Մամիկոն Ասլանյանին

«Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ

Մարինա Խաչատրյանից

Հեռ՝ +374.98.11.04.81

+374.55.40.39.00

Էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com


13.05.2018թ.

ԴԻՄՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի հունիսի 5-ից մինչև հունիսի 12-ը ներառյալ Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում Զարուհի Փոստանջյանը նախատեսում է անցկացնել հավաք և Արցախ պուրակից երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 11:00–ին և ավարտվելու է ժամը 23:00-ին:

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վաղեմության բռնությունների:

Կարգադրիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 5000: Երթի երթուղին է՝ Արցախի պուրակ-Տիգրան Մեծի փողոց-Թումանյան փողոց-Գր. Լուսավորչի փողոց-Հայքի հրապարակ-Տիգրան Մեծի փողոց-Արցախի պուրակ: Երթը սկսվելու է 11:00-ին և ավարտվելու է 23:00-ին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«14» 05 2018թ.
Մուտք N 079 Թերթ N 14

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, թռուցիկներ։

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով։

Կից ներկայացվում է՝

- Հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը (Մարինա Խաչատրյան)
- Հավաքի ղեկավարի անձնագրի պատճենը (Զարուհի Փոստանջյան)
- «Երկիր Ծիրանի» կուսակցության որոշումը

**Դիմող՝ Մարինա Խաչատրյան**

**«Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ**

«Երկիր Ծիրանի» կուսակցություն - Մաշտոցի 33/1 առաջին տարածք
0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն
yerkirtsiraniparty@gmail.com - +37493806690 - www.yerkirtsirani.am